

**Մարիամ Մ. Կարապետյան**

*Բանաս. գիտ. թեկնածու*

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ՝  
ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՎՅԻՆ ՀԱՐԹԱԿ\***

**Բանալի բառեր** – մեդիագրագիտություն, մեդիատեքստ, մեդիագրագիտության ներդրում հանրակրթական առարկաներում, լեզվի դասավանդում, քերականական հասկացություններ, լուր, նկարագրական տեքստ, ոճավորված տեքստ, լեզվի գործիքայնացում:

**Մուտք**

Սոցիալական ցանցերի հսկայական դերը մեր երկրում ակնառու ու միաժամանակ խնդրահարույց դարձավ հատկապես 2020 թ. իրադարձություններից՝ համավարակից և պատերազմից հետո: Մասնավորապես համացանցում լրատվամիջոցների և անհատ օգտատերերի կողմից կեղծ ու մանիպուլյատիվ լուրերի՝ սպառնալից չափերի հասնող տարածումը հիմք դարձավ նոր սրությամբ ընկալելու և հարցադրելու մեդիագրագիտության կարևորությունը:

Թեման, սակայն, նոր չէ: Հատկապես վերջին տարիներին հիմնականում տարբեր հասարակական կազմակերպություններ տարբեր ձևաչափերով փորձում են բարձրացնել հասարակության կամ առանձին հանրությունների մեդիագրագիտության մակարդակը: Այս նախաձեռնությունների շարքում, կարծում ենք, առավել արդյունավետ են նրանք, որոնք փորձում են համակարգային լուծման ուղիներ գտնել: Նման օրինակ են «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ կողմից պարբերաբար կազմակերպվող մեդիագրագիտության դասընթացներն ուսուցիչների համար<sup>1</sup>, որոնք պարտավորվում են իրենց ձեռք բերած գիտելիքները փոխանցել աշակերտներին:

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 25.04.2021:

<sup>1</sup> Սույն հոդվածը գրել ենք 2020 թ. ամառային դպրոցի շրջանակներում կարդացած մեր զեկուցման հիման վրա:

րին մասնավորապես տարբեր հանրակրթական առարկաներում մեդիագրագիտության ներդրման ձևաչափով:

## 1. Խնդրի սահմանման նախնական փորձ

Մեդիագրագիտության կարևոր բաղադրիչ է վավեր տեղեկությունների տեխնիկական որոնման եղանակների ու մատչելի ռեսուրսների ինացությունը: Դրանցից բացի՝ այսօր կիրառվում են նաև ավելի բարդ՝ տարբեր լեզվաբանական հաշվողական մոդելներ, որոնք թույլ են տալիս ստուգել աղբյուրների իսկությունը: Տվյալների վերլուծության՝ մասնագիտական պատրաստվածություն պահանջող համակարգչային-հաշվողական բարդ գործիքներից բացի՝ կան նաև ավելի հասանելի և տեխնիկական ռեսուրսներ չպահանջող միջոցներ, որոնք թույլ կտան բարձրացնել զանգվածային հաղորդակցության բևեռներից մեկի՝ զանգվածային լսարանի, այն է՝ հասարակության մեդիագրագիտությունը: Լեզուն նման զանգվածային մեդիագրագիտության ամենաներսնակ ոլորտներից է՝ որպես հաղորդակցման միջոց ունեցած իր բացառիկ նշանակությամբ: Իսկ լեզվի զանգվածային գործիքայնացման ամենից հարմար հաստատությունը դպրոցն է: Այստեղից էլ՝ **լեզվի դպրոցական դասավանդման միջոցով մեդիագրագիտության զարգացման հեռանկարը:**

Ասվածին տրամաբանորեն հետևում է լեզվի դասավանդման և մեդիագրագիտության դասավանդման համատեղման ու փոխադարձ պիտանիության հստակեցումը: Այս բևեռների ամնչությունը բխում է նախ մեդիագրագիտության տեսակետից մեդիայի լեզվի ունեցած կարևորությունից: Վերջինիս վերլուծության դերը շեշտադրվում է մեդիագրագիտության վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններում հիմնականում քննադատական հասկացմանը զուգահեռ, օրինակ՝ հետևյալ ձևակերպմամբ. «Մեդիայի լեզուն և քննադատական հասկացումը»<sup>2</sup>: Քննադատական հասկացման տեսակետից լեզվի դասավանդման ընթացքում մեդիագրագիտության զարգացումը կարող է նշանակել **ուսումնասիրվող լեզվաբանական թեմաները մեդիատեքստերի ընկալման կողմնորոշիչների վերածելու** ունակության զարգացում: Ուրեմն կարող ենք գնալ այս ուղղությամբ՝ հետազոտել, թե լեզվաբանական կոնկրետ բնագավառներն ինչպես կարող են օգնել մեդիագրագիտություն զարգացնելուն: Այս տրամաբանությամբ՝ ակնկալվող կրթական արդյունքը կլինի մետալեզվական, այն է՝

2 Cuervo Sánchez S. L., Foronda Rojo A., Rodríguez Martínez A., Concepción Medrano Samaniego, Media and Information Literacy: a Measurement Instrument for Adolescents [https://www.researchgate.net/publication/335024835\\_Media\\_and\\_information\\_literacy\\_a\\_measurement\\_instrument\\_for\\_adolescents](https://www.researchgate.net/publication/335024835_Media_and_information_literacy_a_measurement_instrument_for_adolescents) (մուտք 25.04.21).

**լեզվի վերլուծության միջոցով մեդիատեքստերի նկատմամբ հեռավորություն հաստատելու ունակության ձևավորումը**<sup>3</sup>: Դրան կարելի է հասնել լեզվաբանական անդրադարձի ունակության զարգացմամբ, իսկ քերականության ուսուցումը լեզվի «բնականությունը», ինքնին հասկանալիությունը կոտրելու, վերլուծական դարձնելու լավ հնարավորություն է:

Բացի այս գործնական մտահոգությունից՝ կարելի է առանձնացնել նաև այլ՝ ավելի սկզբունքային հարցեր, համանման այն հարցին, որ առաջադրում է, օրինակ, անգլիացի հետազոտող Դեյվիդ Բուքինգհեմը մեդիագրագիտությունն անգլերենի և գրականության դասավանդման շրջանակներում ներդնելու հարցը քննելիս. «Անգլերենի [դասավանդման] շրջանակներում մեդիային և հանրամատչելի մշակույթին ավելի մեծ ուշադրություն դարձնելու կոչը պարզապես գործնական մտահոգություն չէ: Ընդհակառակը, դա ենթադրում է հեռուն գնացող փիլիսոփայական և քաղաքական մարտահրավեր անգլերենին. սա փաստարկ է՝ արմատապես վերամտածելու, թե ինչի մասին է առարկան: Բրիտանական դպրոցներում և համալսարաններում անգլերենի գիտակարգը պատմականորեն հիմնված է եղել «գրականություն» առարկայի սոցիալական և հոգեբանական արժեքի մասին ենթադրությունների վրա: Անգլերենի դասավանդման պիոներների համար ինքնըստինքյան հասկանալի էր համարվում, որ գրականության ազդեցությանը ենթարկվելը (ձիշտ տեսակի և ձիշտ ձևով) ինչոր կերպ կատարելագործում է մարդու զգայունությունը և այդպիսով նրան ավելի լավ մարդ դարձնում»<sup>4</sup>: Անգլերենի ու գրականության այս քաղաքակրթող դերի և մեդիակրթության հակադրությունը հետազոտողը համարում է կեղծ:

Լավի ու վատի նման ճակատային հակադրության վերաբերյալ պատկերացումը գուցե արդեն հնացած է նույնիսկ մեր հասարակությունում: Բայց նախ՝ «ինչի՞ մասին է «հայոց լեզու» առարկան» հարցն առարկայի քննարկած լեզվի տիրույթ տանելը, ապա՝ այդ տիրույթը գրական կանոնիկ լեզվից դեպի մեդիապրակտիկաների լեզվական շերտերը ծավալելը «հայոց լեզու» առարկան, դրանով՝ նաև ինքնին լեզուն նոր հարաբերությունների, սոցիալական փորձի ոլորտ են տեղափոխում:

3 Տե՛ս նաև **Buckingham D.**, Digital Media Literacies: Rethinking Media Education in the Age of the Internet. <https://journals.sagepub.com/doi/pdf/10.2304/rcie.2007.2.1.43> (մուտք՝ 25.04.21):

4 **Buckingham D.**, Media education: Literacy, Learning and Contemporary Culture (Reprinted. ed.). Cambridge, Polity Press, 2007, p. 93

## 2. Հայեցակարգային հիմքեր

1-12-րդ դասարաններում հայոց լեզվի և գրականության ուսուցման համար պետական նոր կրթական հայեցակարգի սահմանած հիմնական հասկացություններից (հաղորդակցում, ընթերցանություն/գրականություն, լեզվական համակարգ, ստեղծարարություն, ինքնություն) մեկը հաղորդակցումն է: **Հաղորդակցումը՝ իր ենթահասկացություններով (բանավոր հաղորդակցում, գրավոր հաղորդակցում, ոչ խոսքային հաղորդակցում),** ինչպես նաև **ընթերցանությունը՝ մասնավորապես տեքստի հասկացում և տեքստի տրամաբանություն** ենթահասկացություններով<sup>5</sup>, զանգվածային հաղորդակցության միջավայրի՝ մեդիայի հետ աշխատանքի լայն հնարավորություն են տալիս:

«Մայրենի լեզու (իբրև մեկ միասնացած առարկա) – 1-6-րդ դասարաններ. ներառում է ընդհանրական, վերառարկայական և միջառարկայական թեմաներ, գրական և ոչ գրական տեքստեր, դրանց տրամաբանության, գեղագիտական կառուցվածքի, պատկերավորման միջոցների ուսումնասիրում»<sup>6</sup>, – նշվում է ծրագրում: Ծրագրի հաջորդ մասի վերաբերյալ ասվում է. «Հայոց լեզու (իբրև մեկ առարկա). 7-12-րդ դասարաններ. ներառում է հայոց լեզվի լեզվաքերականական, ոճաբանական համակարգի միայն գործնական նշանակություն ունեցող թեմաները, որոնց ուսումնասիրությունը կօժանդակի աշակերտի լեզվամտածողության, բանավոր և գրավոր խոսք կազմելու, հաղորդակցական կարողությունների զարգացմանը»<sup>7</sup>:

Չափորոշիչները նաև ուսումնական նյութերի ընտրության որոշակի ազատություն են տալիս. «1-6-րդ դասարաններում, ինչպես նաև հայոց լեզվի (7-12-րդ դասարաններ) ուսումնասիրության համար իբրև ելակետ և նվազագույն միավոր տեքստն է. ընտրվում են ինչպես գրական, այնպես էլ ոչ գրական, այսինքն՝ ուսումնաձանաչողական բնույթի տեքստեր, և դրանց հիման վրա բացահայտվում են լեզվաքերականական երևույթները»<sup>8</sup>:

Կարծում ենք՝ տեքստերի հետ աշխատանքները **փոխանցելի կարողություններ**, այսինքն՝ լեզվի դասավանդման համար առաջնային, լեզվական-լեզվաբանականից բացի, նաև այլ ոլորտներ հարցադրելու համար օգտակար հնտություններ զարգացնելու լայն հնարավորություն են տալիս: Փոխանցելի կարողություններ, որոնք կարող են օժանդակել նաև մեդիայի հասկացմանը:

5 Տե՛ս **Մայրենի**. Ծրագրի հանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար: <http://escs.am/files/files/2020-07-17/8e86258106381f2fda04290ffa268a94.pdf> (մուտք՝ 24.07.20):

6 **Նույն տեղում:**

7 **Նույն տեղում:**

8 **Նույն տեղում:**

Կրթական նոր հայեցակարգերը հուշում են նաև կիրառել մեդիագործիքներ: Սովորողը, ըստ Հայոց լեզվի և գրականության ուսումնասիրության հայեցակարգի նախագծի, պետք է «կարողանա պատրաստած նյութը ներկայացնել նկարներով, աղյուսակներով, սահիկաշարով, մեդիայի տարբեր միջոցներով, կատարի համապատասխան գրառումներ, ինչպես հնչյունալին խոսքով, այնպես էլ ժեստերի լեզվով պատմի իր հետազոտության մասին»<sup>9</sup>:

Այստեղ, սակայն, կարևոր է խուսափել հնարավոր շփոթմունքից. մեդիագործիքների կիրառումը դեռ մեդիագրագիտություն չի նշանակում, ավելին՝ դա կարող է **անքննադատ սպառման** հավելյալ ազդակ դառնալ, եթե ուսուցիչն աշակերտներին չհուշի **նկատել ինքնին մեդիագործիքը**, որը կիրառվում է: Այդ միտքը կարելի է հուշել, օրինակ, հանձնարարելով փոքրիկ շարադրություն գրել որևէ թեմայով, ապա նույն թեմայով տեսանյութ նկարահանել հեռախոսով և սահիկաշար պատրաստել: Աշխատանքները քննարկելիս պետք է բացատրել, որ թեման ներկայացնելու միջոցով՝ տեխնոլոգիայով պայմանավորված՝ տեքստերը տարբեր են ստացվել: Ուրեմն տեխնոլոգիան ինքը որոշակի ձևեր է պայմանավորում, հետևաբար այն ինքնուրույն նշանակություններ ունի, և պետք է հաշվի առնել այդ նշանակությունները, եթե ցանկանում ենք գիտակցված դարձնել մեր հարաբերությունները տեխնոլոգիաների հետ, ինչպես նաև արդյունավետ կիրառել դրանք: Ուրեմն ցանկության և համապատասխան գիտելիքների առկայության դեպքում մեդիագործիքների կիրառումը կարող է նաև դրանց վերլուծության լավ առիթ լինել: Ըստ այսմ՝ հայեցակարգին հետամուտ՝ լեզվի դասավանդման շրջանակներում կարելի է մեդիայի տարբեր տեսակների ուսումնասիրություն կատարել միևնույն խնդրի (կոնկրետ առաջադրանքի) տեսակետից, դրանով մեդիայի տարբեր տեսակների նկատմամբ տարորոշված վերաբերմունք և ակնկալիքներ ձևավորել:

### 3. Ինչի՞ց սկսել

Դասավանդման նախագիծ կազմելիս նախ հարկ կլինի պարզել՝ **կա՞ն արդյոք մեդիագրագիտության զարգացման համար առավել նպատակահարմար թեմաներ:**

Մի կողմից՝ ուսումնասիրվող նյութին վերաբերող գրեթե բոլոր առաջադրանքները կարելի է կազմել մեդիատեքստերի հիման վրա. սա մտերմացնում է սովորողներին մեդիատեքստերին և միևնույն ժամանակ **անդ-**

<sup>9</sup> Հայոց լեզու. ծրագիր հանրակրթական դպրոցի 7-12-րդ դասարանների համար: <http://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d7e.pdf> (մուտք՝ 24.07.20):

րադարձի համար անհրաժեշտ հեռավորություն հաստատում: Սովորողները սկսում են նկատել, որ մեդիահաղորդակցությունը, մեդիատեքստն ինքնին հասկանալի չեն, որ դրանք տեքստեր են, որոնք կառուցվում են ինչ-որ (մեծ չափով առևտրային) նպատակներով, ինչ-որ ճաշակներից, գրագիտության մակարդակներից, սոցիալական հանձնառություններից ելնելով: Աշխատանքը մեդիանյութերի հետ կհուշի, որ դրանցում ևս քերականություն կա՝ ձևաբանություն, շարահյուսություն՝ դառնալով քննադատական վերաբերմունքի ձևավորման սաղմերից մեկը: Աշակերտների մեջ կարելի է խթանել նաև **մետաձանաչողությունը**՝ նկատել տալով, թե ինչն է փոխվում մեդիասպառման իրենց փորձում մեդիայի ուսումնասիրում ենթադրող հանձնարարությունը (ասենք՝ եթերից օտարաբանություններ առանձնացնելը և գրի առնելը) կատարելիս: Եթե, օրինակ, առանց հանձնարարություն-խթանի երեկոյան հեռուստացույց դիտելիս նրանք ավելի են ենթակա եթերի ազդեցությանը, և մեդիաուղերձների սպառումն ավելի կրավորական, պասիվ գործընթաց է, ապա առաջադրանքը կատարելիս ավելի զգոն են դառնում. մեդիաուղերձների հանդեպ բացությունը փոխարինվում է քննական վերաբերմունքով: Ուսուցչի ընդհանրացումը կարող է լինել հետևյալը. մեդիային առնչվող որևէ առանձին հարց հետազոտելը մեզ առհասարակ **քննադատական դիրք է տալիս**, կարծես մեդիան գննելու խոշորացույց է դառնում՝ դրանով իսկ ավելի պաշտպանված դարձնելով մեզ մեդիայի ազդեցություններից: Այսպիսով՝ անդրադարձ կատարելու, անմիջական ընկալումը միջնորդավորելու փորձառությունը, որ կարող է ձևավորվել համապատասխան առաջադրանքներ կատարելիս, կարելի է խթանել, ուժգնացնել աշակերտների մոտ մետահայացքի ձևավորմամբ:

Մյուս կողմից, սակայն, ավելի գայթակղիչ ու խոստումնալից է թվում **առավել նպատակահարմար** թեմաների որոնումը: Թերթենք հայոց լեզվի դպրոցական դասագրքերը՝ այդպիսիք գտնելու նպատակով:

#### 4. Սահմանումից սահմանում, առաջադրանքից առաջադրանք

\* «Գործիական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որով կատարվում է գործողությունը»<sup>10</sup>, - սահմանում է դասագիրքը: Իսկ մեդիագրագիտություն սովորեցնել ցանկացող ուսուցչի համար լավ առիթ է, այսպես ասած, **գործիականությունն իբրև հավաստիության հնարավոր պայման** մեկնաբանելու, երբ ներկայացվում են որևէ **իրադարձության, երևույթի**

<sup>10</sup> Բարսեղյան ՀՁ, Սեթիխանյան ՓՁ, Հայոց լեզու. դասագիրք 7-րդ դասարանի համար, Երթ, «Աստղիկ գրատուն», 2016, էջ 37:

**իրականացման միջոցները:** Մեդիագրագիտություն սովորեցնելն այս տեսակետից տեղի է ունենում մասամբ մեդիայի պրոֆեսիոնալությունը բնորոշող հասկացություններն առանձնացնելու և դրանք անվանող բառերին ընտելացնելու միջոցով, օրինակ՝ **հիմնավորվածություն, հավաստիություն, հանգամանալիություն:** Մա նաև բխում է դպրոցական կրթության արդի չափորոշիչներից, որոնք ուսուցանվող նյութի վերաբերյալ առանցքային հասկացություններ են սահմանում:

### **Օրինակ՝**

«Արմեն Ավետիսյանն իր հյուրանոցային բիզնեսի համար օգտագործել է օֆշորային բանկային հաշիվներ: Մա ապացուցվում է Կայմանյան ազգային բանկից (национальный банк Каймана) արտահոսած եւ «Հետքի» ձեռքի տակ հայտնված **փաստաթղթերով** (ընդգծումը մերն է – Մ. Կ.)»<sup>11</sup>:

\* Մեդիագրագիտության դասավանդումն ուսումնասիրող տեսաբանի բնորոշմամբ՝ մեդիագրագիտություն դասավանդելիս սովորողներին չեն առաջարկում կախարդական թալիսման, որը թույլ կտա տարբերել ձձմարտությունը կեղծիքից, այլ օգնում են նրանց **հասկանալ միջնորդավորումը (mediation) որպես տեքստային գործընթաց**<sup>12</sup>: Այս տեսակետից արդյունավետ կարող են լինել մասնավորապես բուն տեքստային աշխատանքները, որոնք սովորեցնում են բնորոշել տեքստը, տարբերել դրա տեսակները՝ ըստ այս կամ այն չափանիշի: Այսպես՝ 7-րդ դասարանի դասագրքում առաջադրանք կա, ըստ որի՝ հարկավոր է ընտրել՝ նկարագրական, թե դատողական տեքստ է ներկայացվում<sup>13</sup>: Առիթ է՝ խոսելու **նկարագրական և դատողական** տեքստերի մասին՝ մեդիայից օրինակներ բերելով: Աշակերտներին պետք է ասել, որ լուրերը սովորաբար տրվում են նկարագրական տեքստերով:

### **Օրինակ՝**

1. «Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը կազատվի զբաղեցրած պաշտոնից: Այս հարցը ներառված է ՀՀ Կառավարության վաղվա նիստի օրակարգում»<sup>14</sup>:

2. «Մանիպուլյատոր նախարարին և իր մանիպուլյատիվ պաշտպաններին տեղեկացնում եմ, որ ես երբեք չեմ կազմել և չեմ կազմելու դպրոցական ծրագիր կամ դասագիրք: Նույն տհասներին տեղյակ եմ պահում,

11 **Սարուխանյան Վ.**, Օֆշորային բանկի փաստաթղթերը բացահայտել են «Գոլդեն Փելիսի» սեփականատերերի գործարքները. ԱԱԾ-ն հյուրանոցի դիմաց կարճել է քրգործը: <https://hetq.am/hy/article/116946> (մուտք 29.07.20):

12 Տե՛ս **Hobbs R.**, Media Literacy and the K-12 Content Areas, էջ 78.  
[https://mediaeducationlab.com/sites/default/files/MediaLiteracyK12\\_0.pdf](https://mediaeducationlab.com/sites/default/files/MediaLiteracyK12_0.pdf) / (մուտք 10.04.21):

13 Տե՛ս **Բարսեղյան Հ., Մեյթիսանյան Փ.**, նշվ. աշխ., էջ 54:

14 Ռոմանոս Պետրոսյանը վաղը կազատվի Կոտայքի մարզպետի պաշտոնից: <https://news.am/arm/news/594164.html> / (մուտք 29.07.20):

որ այն միտքը, թե այս ծրագրի մասին կարող են խոսել և առաջարկներ անել միայն ուսուցիչները, տխմարություն է»<sup>15</sup>:

Երկու հրապարակումներն էլ ներկայացվում են «News.am» կայքի լրահոսի բաժնում, թեև երկրորդն ընդամենը գրականագետի ֆեյսբուքյան գրառման պատճենում է՝ հազեցած գնահատողական բնույթի բազմաթիվ խիստ սուբյեկտիվ մեկնաբանություններով:

Ստորև՝ մի քանի առաջադրանք, որոնցով կարելի է ամրապնդել մեդիայի վերաբերյալ գիտելիքը.

• **Տեքստերի միջև ընդհանրություններ գտնել:** Նման առաջադրանքներ ևս կան դասագրքերում: Աշխատանքը կարելի է կատարել մեդիատեքստերով՝ կողք կողքի դնելով երկու լուր, ապա երկու հրապարակախոսական հոդված, այնուհետև՝ մեկ լուր և մեկ հրապարակախոսական հոդված: Նպատակը գնահատողական և դատողական տեքստերի և դրանց հատվածների նույնականացումն է:

• **Դասագրքում առաջադրանք կա, որով հանձնարարվում է վերնագրել բանաստեղծության հատվածները:** Կարելի է դրան զուգահեռ հանձնարարել վերնագրել որևէ մեդիատեքստի մասերը: Սա թույլ կտա գտնել պարբերությունների հիմնական տեղեկությունները, գնահատել դրանց տեղեկատվականության աստիճանը:

• **Հանձնարարել հաշվել ածականների քանակը տարբեր ժանրերի մեդիատեքստերում:** Լուրերի թողարկման մեջ դրանց առատությունը պետք է օբյեկտիվության վերաբերյալ կասկած հարուցի: Առաջադրանքը կարելի է կատարել նաև ածականն ուսումնասիրելիս:

\* «Տեքստ» թեման ուսումնասիրելիս նշվում են տեքստի տեսակներն ըստ թեմաների՝ նաև **հրապարակախոսական և տեղեկատվական**<sup>16</sup>: «Տեղեկատվական տեքստում բովանդակությունը պետք է լինի բավարար չափով ամբողջական և ավարտուն, որպեսզի լրացուցիչ պարզաբանման կարիք չունենա»<sup>17</sup>,– ընդգծում է դասագիրքը: Քանի որ նյութը ոճի թեմային է հաջորդում, լավ առիթ է խոսելու, օրինակ, տեքստի թեմայի և ոճի կապի մասին: Մեդիագրագիտություն ուսուցանելու լայն հնարավորություններ են բացվում հենց ոճաբանություն ուսումնասիրելիս:

Առաջադրանք կարող է լինել հետևյալը.

15 Հղիանալու ցանկայի ձևերը՝ ըստ գրականության նոր ծրագրի. Սեյրան Գրիգորյան, <https://news.am/arm/news/594171.html> / (մուտք՝ 29.07.20):  
16 Տե՛ս **Բարսեղյան Հ., Մեյթիլանյան Փ.**, նշվ. աշխ., էջ 149:  
17 **Նույն տեղում**, էջ 150:



**Որևէ լուր ընտրել, ավելացնել հանգամանքներ, այնուհետև պակասեցնել հանգամանքներ, փաստերը փոխարինել գնահատող բառերով: Քննարկել տեքստի փոփոխությունները:**

\* Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 7-րդ դասարանի դասագրքում «**Գովազդ**» թեմա կա՝ ամբողջությամբ ներկայացված սպառողականության դիրքերից, որն անքննադատ սպառման է տրամադրում: Փորձ է արվել ժամանակակից տեղեկատվական դարաշրջանի թեմա բերելու դպրոցական ծրագիր, սակայն իսպառ բացակայում է քննադատական հայացքը: Միտումը, նկատելի է, սերում է լեզվի քերականական ճշգրտության և հաճելիության պարզունակ որոնումից. «Հաճելի է ընկալվում այն գովազդը, որը հնարավորինս խուսափում է բարբառային բառերից ու ժարգոնային արտահայտություններից, օտարաբանություններից. վերջիններս պետք է օգտագործվեն տեղին և խիստ անհրաժեշտության դեպքում»<sup>18</sup>: Այնինչ գովազդի լեզուն վաղուց բարդ լեզվամշակութային ուսումնասիրությունների առարկա է, և դպրոցական ծրագրում կարելի է առնվազն հուշել գովազդի՝ սոցիալական նշանակություններ ունեցող երևույթ լինելու և դրա լեզվի կասկածելիության միտքը:

Տեսական նյութին հաջորդող առաջադրանքներից մեկը («Դասարանում ներկայացրո՞ւ քո դիտած թե՛ լավ, թե՛ վատ գովազդները և հիմնավորի՞ր՝ ինչու է լավ, ինչու է վատ»<sup>19</sup>)՝ «լավ» ու «վատ» գովազդներ փնտրելու պարզունակ հանձնարարությամբ, գովազդի սոցիոմշակութային բազմմաստությունը հանգեցնում է գրավիչ կամ ոչ գրավիչ շարադրանքին: Աշակերտներին ստեղծարարության և վերլուծության մղելու այս փորձն առավելագույնը կարող է խանդավառություն առաջացնել, բայց ոչ երբեք քննադատական հայացք:

\* «**Նախադասության անդամ չի դառնում**»: Եթե «վերաբերականներ» թեման անցնելիս աշակերտները սոցիալական ցանցերից գտնեն օգտատերերի հրապարակած լուրեր, առանձնացնեն նախադասության անդամները և վերաբերականները, կպարզվի, որ **նախադասության անդամ չդարձող խոսքի մասը նաև հիմնական տեղեկության՝ լուրի մաս չի դառնում**: Այս հայացքը կարևոր է տեղեկությունները մեկնաբանություններից, հուզական ընկալումներից զատել կարողանալու համար:

\* **Տեղի, ժամանակի, չափ ու քանակի մակրայների առկայությունը՝ որպես գործողության հանգամանալիության, դրանով՝ նյութի հավաստիության ցուցիչ**: Հաճախ տարբեր կայքեր սոցիալական ցանցերում շարունակաբար «պտտում» են շատ դիտումներ ունեցած, բայց արդեն ժամանակավրեպ հրապարակումներ՝ կրկին դիտումներ կորզելու ակնկալիքով:

18 **Նույն տեղում**, էջ 153:

19 **Նույն տեղում**, առաջադրանք 26:

Օրինակ՝ այն լուրը, որ ՀՀ ԿԳՄՄ նախարար Ա. Հարությունյանն Առաջին ալիքի եթերում հայտնել էր, որ եթե կորոնավիրուսի համաճարակի նոր բռնկում չլինի, երեխաները սեպտեմբերի 1-ից դպրոց կգնան, «Երեխաները կրկին դպրոց կգնան» կամ նմանատիպ այլ վերնագրերով պարբերաբար հայտնվում էր Ֆեյսբուքում՝ ամեն օրվա զարգացումներից կախված, շարունակ փոփոխվող իրավիճակում պատրանք առաջացնելով, թե նոր լուր է: Բացի դրանից՝ դուրս էր մղվում նախարարի խոսքի «Եթե»-ն: Իսկ հղմամբ լուրը տարածող կայք անցնելիս կամ մոտ մեկ ամիս առաջվա ամսաթիվ էիր տեսնում (սյուժում գրված է՝ «Երեկ ասաց»), կամ, որ լրագրողական էթիկայի ավելի կոպիտ խախտում է, թարմ ամսաթիվ, սակայն հրապարակման մեջ նշված չէր լինում՝ երբ և որտեղ է նախարարը նման հայտարարություն արել:

\* **Ձևի մակբայների առատությունը՝ կասկածելիության նշան:** Որքան շատ են ձևի մակբայները, այնքան մեծ է նյութի՝ սուբյեկտիվ ընկալման արտահայտություն լինելու հավանականությունը:

**Առաջադրանք:** Փորձել տեքստում ածականներ և մակբայներ ավելացնել, մեկ այլ տեքստում՝ պակասեցնել: Քննարկել տպավորությունները:

\* **Շարահյուսությունը** թերևս մեղիագրագիտություն դասավանդելու ավելի մեծ հնարավորություններ է տալիս, քան ձևաբանությունը: Այսպես՝ «Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի»<sup>20</sup> թեմայից, որ ուսումնասիրվում է 8-րդ դասարանում, մեղիագրագիտության զարգացման համար պիտանի առատ նյութ կարելի է կորզել: Օրինակ՝ աշակերտներին կարելի է սովորեցնել, որ **օբյեկտիվության հավակնող մեղիատեքստին ավելի բնորոշ են պատմողական նախադասությունները**, որոնց նպատակը, ըստ դասագրքի, տեղեկություններ հաղորդելն է: Հարցական, հրամայական և բացականչական նախադասությունների առատությունը հեղինակային, առավել ոճային ասելիքի նշան է, թերևս ավելի շատ մեկնաբանություն՝ փաստի փոխարեն: Լուրեր փնտրելիս հարկ է վերապահումով մոտենալ նախադասության այս տեսակներին:

\* Մեկ այլ հուշում. երբ հարցական, հրամայական նախադասությունները կիրառվում են ոչ իրենց հիմնական՝ սահմանված իմաստներով, ոճական արժեք են ստանում, հետևաբար՝ **հեղինակի դիրքորոշման ներկայացման** արժեք. Ֆեյսբուքում որևէ կեսլուր-կեսդաստողության պատահելիս պետք չէ իբրև փաստ ընկալել:

\* Նախադասությունների իմաստային բնույթը պարզելուն վերաբերող առաջադրանքները<sup>21</sup> կարելի է կատարել մեղիատեքստերի, թեկուզ սոցիա-

20 **Բարսեղյան Հ., Մեյթիսանյան Փ.**, Հայոց լեզու. հանրակրթական դպրոցի դասագիրք 8-րդ դասարանցիների համար, Եր., «Աստղիկ» գրատուն, 2017, էջ 64:  
21 Օրինակ՝ տես **Բարսեղյան Հ., Մեյթիսանյան Փ.**, նշվ. աշխ., էջ 67, առաջադրանք 11:

լական ցանցերի գրառումների հիման վրա, որ և՛ կշահագրգռի աշակերտներին՝ նրանց հետաքրքրող ոլորտի հետ կապելով, և՛ քննադատական գործիքներ կտրամադրի:

\* Ընդհանրապես դասագրքերի մի շարք առաջադրանքներ կարելի է կատարել մեդիատեքստերի հիման վրա: Մեկ այլ օրինակ. հարցական նախադասությունների իմաստային տարբեր տեսակներով նախադասություններ կարելի է դուրս գրել<sup>22</sup> հեռուստատեղեկից, լրատվական կայքերից, սոցիալական ցանցերից՝ դարձյալ նպատակ ունենալով աշակերտների ուշադրությունը հրավիրելու մասնավորապես դրանց ոճական կողմի վրա: Հարցական նախադասությունն իր հիմնական գործառնությունից՝ հարցում արտահայտելուց բացի կարող է, օրինակ, հեզնանք արտահայտել: Քերականական հարցի նշանակության նման ուսումնասիրությունը մի կողմից նպաստում է թեմայի ավելի լավ յուրացմանը, քանի որ աշակերտներին գրավող նյութ է դիտարկվում, մյուս կողմից աշակերտը սովորում է ուշադրություն դարձնել հարցական նախադասության իմաստային տեսակին՝ ընկալելով որպես **վերաբերմունք**, հետևաբար ոչ փաստ:

\* Որպես կարևոր միտում՝ առանձնացնենք հայոց լեզվի դասագրքերում տեղի ունեցած մի կարևոր փոփոխություն: Օրինակ՝ եթե նախկինում նախադասությունը սահմանվում էր իբրև քերականական հարաբերություններով կապված բառերի խումբ, որն իմաստ է արտահայտում, ապա այժմ իբրև նախադասություն է բնորոշվում բառերի այն խումբը, որը **հաղորդակցական արժեք ունի**: Եթե նախկինում առանձնացվում էին նախադասությունների տեսակներ՝ ըստ հնչերանգի, ապա այժմ նույն տեսակների առանձնացման չափանիշը **հաղորդակցման նպատակն** է՝ նախադասությունների տեսակներ՝ ըստ հաղորդակցման նպատակի: Հաղորդակցման բաղադրիչի ընդգծումը կարևոր հանգամանք է, որ մեդիագրագիտության համար կարևոր եզրույթ է տրամադրում:

\* • «Խնդիրները ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող առարկաներ»<sup>23</sup>:

• «Պարագաները ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող հանգամանքներ»<sup>24</sup>:

Գործողության հետ կապ ունեցող հանգամանքներն ու առարկաները հարմար ձևակերպումներ են՝ բուն գործողությունը, դրա պայմանները, միջոցները, նպատակներն առանձնացնել սովորելու համար: Մեդիագրագիտության զարգացման նպատակով դրանք կիրառելը կնշանակի **քերականական հասկացություններին նաև սոցիալական իմաստ տալ**:

22 Ըստ **Բարսեղյան Հ., Մեթոդական Փ.**, նշվ. աշխ., էջ 66, առաջադրանք 10-ի:

23 **Նույն տեղում**, էջ 105:

24 **Նույն տեղում**:

\* Դասագրքերի վերջին թեմաները գործնական գրություններին են վերաբերում, երբեմն էլ լրատվական միջոցներին: Նախկինում գործնական գրությունները գրելու ամենահաճախադեպ ասպարեզներն էին «չգրող մարդու» համար: Գրելու ամենահաճախադեպ ասպարեզներն այսօր արդեն սոցիալական ցանցերն են՝ գրառումներով, մեկնաբանություններով, կենդանի միացումներով: Հետևաբար դրանց արժե ավելի մեծ ուշադրություն դարձնել: Իսկ դասագրքի՝ լրատվամիջոցներին վերաբերող նյութերն արժե լրացնել և իսկապես կարևորել, որովհետև դրանք ուսումնական ծրագրի վերջին թեմաներն են, որոնք բաժին են ընկնում տարեվերջին, ուստի գուցե չեն էլ քննարկվում:

«Հեռուստացույցը քո կյանքում»<sup>25</sup>. այսպես է կոչվում, օրինակ, 9-րդ դասարանի հայոց լեզվի դասագիրքն ամփոփող թեմաներից մեկը: Չափից շատ հեռուստացույց նայելու հարցը խրատական պատմությամբ է ներկայացվում՝ դրա բացասական հետևանքներից նշելով դասերը չպատրաստելը և ընտանեկան գժտությունները: Կարծում ենք՝ խրատական դատողություններն ավելի նպատակահարմար է փոխարինել քննադատական գործիքների տրամադրմամբ: Թերևս կարող ենք ձևակերպել ավելի վստահ. **մեդիագրագիտության զարգացման կարևոր ուղիներից մեկը պիտի լինի դաստիարակչական դիսկուրսի փոխարինումը քննադատական դիսկուրսով:**

## 5. Լեզուն սոցիալական ցանցերում

Բամբասանքների, հորինվածքի արագ տարածումը սոցիալական ցանցերում վաղուց է մտահոգում հետազոտողներին. դրանք ամենևին էլ անվնաս չեն: Մտահոգություններից մեկն այն է, որ, ինչպես նկատում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Վերափոխման կարողություն կայուն թվանշային զարգացման դարաշրջանում» (Savoir-devenir in sustainable digital development) ամբիոնի ղեկավար Դիվինա Ֆրաու-Մեյգալը, աուտենտիկությունը (իսկականություն, վավերություն) ավելի բարձր են սկսում դասել, քան ճշմարտությունը, որն «ընկալվում է որպես առօրյա և տեղական հետաքրքրություններից հեռու ընտրախավերի կողմից հորինված»<sup>26</sup>: Կարող ենք այստեղից մի պնդում բխեցնել, որ չի բավարարվում կեղծ և ստույգ լուրերի տարբերակմամբ. **անգամ տեղեկատվության աղբյուրների վկայակոչվածությունը կամ չվկայակոչվածությունը** (որ քերականական տեսակետից իբրև հի-

25 Բարսեղյան Հ., Մեյթիսյան Փ., Հայոց լեզու. հանրակրթական դպրոցի դասագիրք 9-րդ դասարանի համար, «Աստղիկ գրառու.», ԵրԹ, 2018, էջ 131:

26 Developing a Critical Mind Against Fake News. <https://en.unesco.org/courier/july-september-2017/developing-critical-mind-against-fake-news> (մուտք՝ 23.07.2021):

մունքի պարագա է կառուցվում) **բավարար չեն, երբ ցանկանում ենք ավելի խորքային պատկերացում ունենալ տեղեկատվամիջոցի մասին:** Իսկ լեզուն խորքային ըմբռնման լայն հնարավորություններ է բացում: Մեդիագրագիտությունը լեզվի դասավանդման միջոցով կարող է հուշել նաև հոգածություն սեփական լեզվի նկատմամբ սոցիալական ցանցերում հաղորդակցվելիս:

**«Հիմունքի պարագայի» էթիկա.** լեզվի դասավանդման դիտակետից պատկերավոր կերպով այսպես անվանենք մեդիագրագիտության կարևոր խնդիրներից մեկը՝ **սոցիալական ցանցերում սեփական վարքագծի՝ էթիկայի** ձևավորումը: Հայոց լեզվի դասընթացը կարող է աշակերտներին սովորեցնել **իրենց լեզուն սոցիալական ցանցերում որպես իրենց վարքի գործիք** դիտարկել: Այդ միտումը կարելի է զարգացնել վերը նշված և այլ առաջադրանքներով: Հանձնարարել, օրինակ, **սեփական ֆեյսբուքյան գրառումներում խոսքի մասերի գործածության վերլուծություն կատարել:**

Սոցիալական ցանցերում տեղեկատվամիջոցների հրապարակումները տարածվում են ինչպես օգտատերերի՝ դրանց մասին պատմելով, այնպես էլ դրանց հղումներով: Ինչպե՞ս կարող է օգնել մեդիագրագիտությունն այդ հղումների բազմազանության մեջ կողմնորոշվելիս: Առհասարակ, ի՞նչ խնդիրներ են դրանք հարուցում:

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի հրատարակած փաստերի ստուգման ուղեցույցը տեխնիկական գործիքներ ներկայացնելուն զուգահեռ հուշում է. «Արդյո՞ք ձեզ որևէ բան չի թվում ավելորդ կամ չափազանց լավը՝ ձիշտ լինելու համար»<sup>27</sup>: Ինչպես նաև. «Կիրառեք «Չափազանց լավն է՝ ձիշտ լինելու համար» թեստը»<sup>28</sup>: Իսկ մեդիագրագիտության ձեռնարկները զգուշացնում են, որ կեղծ հրապարակումների լեզուն ավելի գրգռիչ է, քանի որ մոլորեցնելու և «քլիքներ» կորզելու նպատակ ունի:

Այստեղից սահուն մոտենում ենք մասնավորապես **խայծ-վերնագրերի** խնդրին: Հրապարակումների վերնագրերը խոստանում են գաղտնիքներ, մեթոդներ, հնարքներ, հնարավորություններ, քայլեր, բացահայտումներ, պատճառներ, լուծումներ և այլն. նման բառերն այն խայծն են, որ վերնագիրը գայթակղիչ են դարձնում<sup>29</sup>: Մեկ այլ դեպքում խայծ-վերնագրերը պարզապես խաբում են ընթերցողին, քանի որ դրանց տակ վերնագրի հետ կապ չունեցող բովանդակություն է լինում:

27 Տեղեկությունների ստուգման համառոտ ուղեցույց լրագրողների համար, խմբ. **Սաֆարյան Ն.**, Եր., «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, 2017, էջ 31:

28 Նույն տեղում, էջ 45:

29 Տե՛ս **Կարապետյան Մ.**, Հաղորդակցության ոճեր և մեդիահաղորդակցություն, Դասախոսություններ, Եր., Հեղինակային հրատ., 2020, էջ 35:

Դիտումներ կորզել փորձող հրապարակումները սոցիալական ցանցերում հաճախ նաև այսպիսի հորդորներով են տարածվում՝ «Ժողովուրդ անխնա տարածեք», «Ժողովուրդ, ինչքան հնարավոր է տարածեք», «Անպայման նայելու» և այլն: Մեդիագրագիտության զարգացման դերը նման գրառումներին անմիջապես արձագանքելու հոժարությունը կասեցնելը կարող է լինել: Գուցե դժվար լինի (թեև լավ կլինեն փորձել) աշակերտներին բացատրել, որ նման հրապարակումները շահագործում են «Ժողովուրդ» բառի միավորիչ մագնիսականությունը, հաճախ ազգային պաթոսը, դյուրահավատությունը, բայց ավելի հեշտ է թերևս զգուշավորություն զարգացնել նման կաղապարային ձևակերպումների նկատմամբ, մանավանդ որ դրանք հեշտ ճանաչելի են:

Ընթերցողին օգնության եկող լեզվական գիտելիքներն այստեղ ևս ավելի շատ ոճական են, իսկ պարզեցված դեղատոմսը՝ **անվստահությունը ոճականորեն խիստ ընդգծված, գայթակղել փորձող վերնագրերի նկատմամբ:**

Այժմ մի օրինակ, որը թույլ կտա խոսել սոցիալական ցանցերում տարածվող **կեղծ լուրերի ոճի** մասին: Այսպես՝ Փաստերի ստուգման հարթակը ստուգել և հերքել է այն լուրը, որ «Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հայտարարել է, որ կորոնավիրուսի պանդեմիա չկա»<sup>30</sup>: Ակտիվ հղումներ պարունակող մեջբերումներով կայքը ներկայացնում է ֆեյսբուքյան երկու օգտատերերի գրառումներ, որոնք տարածել են այս կեղծ լուրը.

«Ուշադրություն, ձեզ հետ խոսում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ-ում պանդեմիա է:

Ուշադրություն, խոսում է ԱՀԿ-ն, պանդեմիա չկա»:

Մյուս օգտատիրոջ էջում.

«ՅՕՅ-ը հայտարարելա որ պանդեմիա չկա, բայց Հայաստանի ԵՕՅ-երը ասում են կա, Նիկոլը տենցա ուզում»:

Սրանք ոճականորեն ընդգծված կեղծ լուրերի բնորոշ օրինակներ են: Մեդիագրագիտության ուսուցման կարևոր ձեռքբերում կլինեն, եթե այն առհասարակ **«ոճավորված» լուրերին կասկածելու, առնվազն քննադատական դիրքորոշմամբ արձագանքը միջնորդելու** ունակություն ձևավորեր: Այդ ունակությունը կարևոր դեր կունենար, օրինակ, կորոնավիրուսային հիվանդության համաճարակի օրերին. մարդիկ վերապահումով կմոտենային դիմակ չկրելը խրախուսող գրառումներին: Առհասարակ, մեդիագրագիտության էթիկական-հոգեբանական արդյունք կարող է լինել «սուր» լեզվով չգոհանալու, սրությունը, ժողովրդական լեզվով ասած,

30 **Ավետիսյան Ա.**, ԱՀԿ-ն չի հայտարարել, որ պանդեմիա չկա. տարածվող լուրերը կեղծ են: <https://fip.am/11841> (մուտք 25.07.20):

սրտահովանք չդարձնելու հասունությունը, որ կարևոր սոցիալական դերակատարում կունենա:

## Անփոփում

Այսպիսով՝ հայոց լեզվի դասավանդումը դպրոցական առարկայական ծրագրերում մեդիագրագիտության ներդրման ոլորտներից մեկն է, որը, սակայն, առանձնանում է իր կարևորությամբ՝ պայմանավորված մեդիագրագիտության համար լեզվական բաղադրիչի ունեցած բացառիկ նշանակությամբ: Մեդիագրագիտության դպրոցական դասավանդման հաստատությանին ծածկույթը և լեզվի այդ բացառիկ նշանակությունն այն հանգամանքներն են, որոնք հայոց լեզվի ուսուցանումը կարող են դարձնել զանգվածային մեդիագրագիտության նշանակալի խթան:

Կրթական չափորոշիչների և դասագրքերի նյութի վերլուծությամբ կարելի է դուրս բերել եղանակներ՝ թեմա առ թեմա քերականական նյութին զուգահեռ սովորեցնելու լեզուն մեդիայի գործիք դիտարկել, լեզվական գիտելիքի միջոցով անդրադարձի համար անհրաժեշտ հեռավորություն հաստատել մեդիայի լեզվից, հարցեր տալ լեզվի նշանակությունների մասին: Լեզվաբանական թեմաների օգնությամբ մեդիայի լեզուն խնդրականացնելը մետալեզվական և մետաձանաչողական նշանակություն ունեցող մոտեցում է:

Մեդիագրագիտության համար ունեցած նշանակությունից զատ՝ հայոց լեզվի նման քննարկումը կարևոր արդյունք կարող է ունենալ նաև հենց «Հայոց լեզու» առարկայի, դրանով նաև առհասարակ հայերենի համար: **Լեզվական գիտելիքն այսպես տեղափոխվում է գործնական նշանակության ոլորտ, բեռնվում է սոցիալական նշանակություններով, դառնում հաղորդակցության ժամանակակից դիսկուրսների բաղադրիչ՝ զուգահեռաբար իբրև լեզու և իբրև մետալեզու:** Հանգամանքներ, որոնք այսօր շատ կարևոր են մասնավորապես հայերենի արդիականացման տեսակետից:

**Մարիամ Մ. Կարապետյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակում են մեդիայի և մշակութային ուսումնասիրությունների, մշակութային լրագրության, հաղորդակցության տեսությունների, մեդիա – հասարակություն փոխառնչությունների հիմնախնդիրները:

**Էլ. հասցե** – mariamkarapetyan@ysu.am

Summary

**ARMENIAN LANGUAGE TEACHING AS AN INSTITUTIONAL PLATFORM FOR MEDIA LITERACY DEVELOPMENT**

Mariam M. Karapetyan

**Key words** – Media literacy, media text, introduction of media literacy into general education programs, language teaching, grammatical concepts, news, descriptive text, stylized text, language instrumentation.

The paper discusses the possibilities of using language teaching as a tool for the development of media literacy. In particular, methods of developing distance-setting skills in relation to media-texts through language analysis are given.

The metalinguistic, metacognitive meaning of this approach is interpreted. The school teaching of the language (in this case, Armenian) is considered as a way of institutional introduction of media literacy, and Armenian language teaching is considered as a tool for achieving mass media literacy. The paper also examines the conceptual fundamentals for the introduction of media literacy in “Armenian language”, namely, the compliance with the new subject criteria of education.

Theoretical observations are accompanied by practical tasks and by the analysis of theoretical and practical material from Armenian language textbooks. So, how specific linguistic topics can help in the development of media literacy?

Due to this circumstance, the paper has scientific and practical significance and can be used as a practical guide for introducing media literacy into language learning.



## ПРЕПОДАВАНИЕ АРМЯНСКОГО ЯЗЫКА КАК ИНСТИТУЦИОНАЛЬНАЯ ПЛОЩАДКА РАЗВИТИЯ МЕДИАГРАМОТНОСТИ

Мариам М. Карапетян

**Ключевые слова** – медиаграмотность, медиатекст, внедрение медиаграмотности в общеобразовательные программы, преподавание языка, грамматические понятия, новости, описательный текст, стилизованный текст, инструментализация языка.

Статья рассматривает возможность применения преподавания языка как инструмент развития медиаграмотности. В частности, в ней приводятся способы развития навыков установления дистанции по отношению к медиатекстам посредством анализа языка. Интерпретируется метаязыковое, метакогнитивное значение этого подхода. Школьное преподавание языка, в данном случае языка армянского, рассматривается как способ институционального внедрения медиаграмотности.

Преподавание армянского языка рассматривается как инструмент достижения массовой медиаграмотности. В статье анализируется также концептуальная основа внедрения медиаграмотности в предмет «Армянский язык», а именно – соответствие с новыми предметными стандартами образования. Теоретические доводы сопровождаются практическими заданиями, анализом теоретического и практического материала из учебников армянского языка. Анализируется, как конкретные лингвистические темы способствуют развитию медиаграмотности. Исходя из этого, можно считать, что статья имеет научно-практическое значение и может применяться как практический справочник по внедрению медиаграмотности при обучении языку.

### REFERENCES

1. **Avetisyan A.**, АНК-ն չի՛ի հայտարել, որ pandemia չի՛կա. taratsvogh lurere՛g keghts en, <https://fip.am/11841> (mutk՛ 25.07.20) (**In Armenian**).
2. **Barseghyan H., Meyt՛ikhanyan P՛.**, Hayots՛ lezu. dasagirk՛ 7-rd dasarani hamar, Er., “Astghik” hrat., **2016 (In Armenian)**.
3. **Barseghyan H., Meyt՛ikhanyan P՛.**, Hayots՛ lezu. hanrakrt՛akan dprots՛i dasagirk՛ 8-rd dasarants՛ineri hamar, Er., “Astghik” hrat., **2017 (In Armenian)**.
4. **Barseghyan H., Meyt՛ikhanyan P՛.**, Hayots՛ lezu. hanrakrt՛akan dprots՛i dasagirk՛ 9-rd dasarani hamar, Er., “Astghik” hrat., **2018 (In Armenian)**.
5. Hayots՛ lezu. tsragir hanrakrt՛akan dprots՛i 7-12-rd dasaranneri hamar,

- <http://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d7e.pdf> (mutk' 24.07.20) **(In Armenian)**.
6. **Karapetyan M.**, Haghordakts'ut'yan ocher ev mediahaghordakts'ut'yun, Dasakhosut'yunner, Er., Heghinakayin hrat., **2020 (In Armenian)**.
  7. **Mayreni.** tsragir hanrakrt'akan dprots'i 1-6-rd dasaranneri hamar, <http://escs.am/files/files/2020-07-17/8e86258106381f2fda04290ffa268a94.pdf> (mutk' 24.07.20) **(In Armenian)**.
  8. **Sarukhanyan V.**, Ofshorayin banki p'astat 'ght'erë bats'ahaytel en «Golden P'elisi» sep'akanatereri gortsark'nerë. AATs-n hyuranots'i dimats' karchelëk'rgortsë, <https://hetq.am/hy/article/116946> (mutk' 29.07.20) **(In Armenian)**.
  9. Teghekut'yunneri stugman hamařot ughets'uyts' lragroghneri hamar, khmb. **Safaryan N.**, Er., Media nakhadzernut'yunneri kentron HK, 2017 **(In Armenian)**.